ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ

«ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը կարգավորում է պրոբացիայի նպատակները, խնդիրները, սկզբունքները, կազմակերպման և գործունեության հիմունքները, այլընտրանքային խափանման միջոցների, ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների, անվտանգության միջոցների, պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատժի կրումից ազատելու, պատժից պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում փորձաշրջան նշանակելու, պատժի կրումը հետաձգված անձանց նկատմամբ վերահսկողության իրականացման և զեկույցի տրամադրման կարգի, պրոբացիայի անչափահաս շահառուների նկատմամբ իրականացվող պրոբացիայի առանձնահատկությունների~~, ինչպես նաև պրոբացիայի պետական ծառայության (այսուհետ՝ Պրոբացիայի ծառայության) գործունեության~~ հետ կապված հարաբերությունները:

«Հոդված 1.1. Պրոբացիա իրականացնող մարմինը

1. Հայաստանի Հանրապետությունում պրոբացիա իրականացնում է պրոբացիայի պետական ծառայությունը (այսուհետ՝ Պրոբացիայի ծառայություն):

2. Պրոբացիայի ծառայության խնդիրները, կազմակերպման և գործունեության հիմունքները, պրոբացիայի ծառայության՝ որպես պետական ծառայության առանձին տեսակի առանձնահատկությունները, ինչպես նաև պրոբացիայի ծառայության լիազորությունները սահմանվում են «Պրոբացիայի ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, սույն օրենքով և այլ իրավական ակտերով:»:

Հոդված 2. Պրոբացիայի մասին օրենսդրությունը

1. Պրոբացիայի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, սահմանադրական օրենքներով, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքով, «~~Քաղաքացիական~~ Պրոբացիայի ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, սույն օրենքով և այլ իրավական ակտերով:

Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

4) **պրոբացիայի ծառայող՝** պրոբացիայի ծառայությունում հանրայինքաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոն զբաղեցնող անձ.

Հոդված 4. Պրոբացիայի նպատակները~~Պրոբացիայի նպատակներն ու խնդիրները~~

~~2. Պրոբացիայի խնդիրներն են՝~~

~~1) քրեական վարույթի ընթացքում սույն օրենքով նախատեսված այլընտրանքային խափանման միջոցների կատարումը.~~

~~2) ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների և դատարանի կիրառած հարկադրանքի այլ միջոցների կատարումը.~~

~~3) ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների և այլընտրանքային խափանման միջոցների կատարման անհատական պլանավորման իրականացումը՝ գնահատելով ռիսկերը և հաշվի առնելով պրոբացիայի շահառուի կարիքները.~~

~~4) պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինելու վերաբերյալ պրոբացիայի շահառուի մասին զեկույցների տրամադրումը.~~

~~5) պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատժի կրումից ազատելու, պատժից պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում փորձաշրջանի մեջ գտնվող կամ պատժի կրումը հետաձգված անձանց նկատմամբ սահմանված վերահսկողության իրականացումը.~~

~~6) պրոբացիայի շահառուի և տուժողի (տուժողի իրավահաջորդի) միջև հաշտարարության իրականացումը:~~

Գ Լ Ո Ւ Խ 15

ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՄԱԿՈՐԸ
~~ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ~~

~~Հոդված 52. Պրոբացիայի ծառայությունը~~

~~1. *(մասն ուժը կորցրել է 23.03.18 ՀՕ-283-Ն)*~~

~~2. Պրոբացիայի ծառայությունը կազմված է կենտրոնական և տարածքային մարմիններից: Պրոբացիայի ծառայողները քաղաքացիական ծառայողներ են:~~

~~3. Պրոբացիայի ծառայության կենտրոնական մարմինը բաղկացած է բաժիններից, որոնց կազմում կարող են գործել բաժանմունքներ:~~

~~4. Պրոբացիայի ծառայության տարածքային մարմիններ են պրոբացիայի ծառայության մարզային (Երևանի քաղաքային) մարմինները, որոնց կազմում կարող են գործել բաժիններ:~~

~~4.1. Պրոբացիայի ծառայության ներքին կանոնակարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ արդարադատության նախարարի ներկայացմամբ:~~

~~5. *(մասն ուժը կորցրել է 23.03.18 ՀՕ-283-Ն)*~~

6. Պրոբացիայի ծառայությունում ծառայությունն իրականացվում է օրինականության, մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը հարգելու, մարդասիրության ու հրապարակայնության սկզբունքների պահպանմամբ՝ միանձնյա ու կենտրոնացված ղեկավարման միջոցով:

7. Պրոբացիայի ծառայության կենտրոնական և տարածքային մարմիններն ունեն Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իրենց հայերեն անվանմամբ կլոր կնիք, միասնական նմուշի ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ: Պրոբացիայի ծառայողները կարող են կրել համազգեստ:

8. Պրոբացիայի ծառայության կենտրոնական և տարածքային մարմինների կողմից օգտագործվող կնիքի, միասնական նմուշի ձևաթղթերի, խորհրդանիշի, անհատականացման այլ միջոցների, համազգեստի և կրծքանշանի նկարագիրը, ինչպես նաև համազգեստ և կրծքանշան կրելու կարգը հաստատում է համապատասխան նախարարը:

(52-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-283-Ն, լրաց. 07.07.22 ՀՕ-287-Ն)

Հոդված 53. Պրոբացիայի ծառայության լիազորությունները

1. Պրոբացիայի ծառայությունը՝

1) ապահովում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված այլընտրանքային խափանման միջոցների կատարումը.

2) ապահովում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված անվտանգության միջոցների կատարումը.

3) ապահովում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարումը.

4) տրամադրում է պրոբացիայի շահառուի վերաբերյալ զեկույցներ, ներկայացնում հաշվետվություններ և միջնորդություններ.

5) վերահսկողություն է իրականացնում պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատժի կրումից ազատելու, պատժից պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում փորձաշրջանի մեջ գտնվող կամ պատժի կրումը հետաձգված անձանց նկատմամբ.

6) իրականացնում է հաշտարարություն.

7) իրականացնում է վերասոցիալականացման միջոցառումներ.

8) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

2. Պրոբացիայի ծառայությունում կարող են իրականացվել քրեաբանական հետազոտություններ՝ պրոբացիայի շահառուների նկատմամբ կիրառվող վերասոցիալականացման, հանցագործությունների կանխման և վերականգնողական միջոցառումների գիտական ուսումնասիրության նպատակով:

3. Պրոբացիայի ծառայության ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:

(53-րդ հոդվածը փոփ. 23.05.18 ՀՕ-335-Ն)

Հոդված 54. Համապատասխան նախարարության լիազորությունները պրոբացիայի ծառայության կազմակերպման գործում

(վերնագիրը փոփ. 23.03.18 ՀՕ-283-Ն)

1. Համապատասխան նախարարությունը կազմակերպում, ղեկավարում և վերահսկողություն է իրականացնում պրոբացիայի ծառայության գործունեության նկատմամբ:

2. Համապատասխան նախարարը՝

1) կազմակերպում է և ընդհանուր վերահսկողություն իրականացնում պրոբացիայի ծառայության գործունեության նկատմամբ.

2) արձակում է պրոբացիայի ծառայության գործունեության կազմակերպմանն ուղղված հրամաններ և տալիս է ցուցումներ.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կատարում է նշանակումներ, կիրառում է կարգապահական և խրախուսանքի միջոցներ.

4) քննում է պրոբացիայի ծառայողների նկատմամբ բերված բողոքները, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով և իր լիազորությունների սահմաններում կասեցնում, վերացնում, անվավեր, չեղյալ կամ ուժը կորցրած է ճանաչում պրոբացիայի ծառայության պաշտոնատար անձանց՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող, այլոց իրավունքները խախտող կամ սահմանափակող հրամանները, որոշումներն ու ցուցումները.

5) սահմանում է պրոբացիայի ծառայության կողմից հաշվետվություններ ներկայացնելու կարգը և ժամկետները.

6) հաստատում է պրոբացիայի ծառայողի այցելության արդյունքում, պրոբացիայի ծառայողին իրավասու մարմնի որոշմամբ սահմանված վայր մուտքը և ելքն արգելելու, պրոբացիայի ծառայողի պարտականությունների կատարմանը ցանկացած ձևով խոչընդոտելու դեպքում կազմվող արձանագրությունների ձևերը.

7) հաստատում է իրավասու մարմնի որոշմամբ սահմանված կոնկրետ սահմանափակումների վերաբերյալ կազմվող հաշվետվությունների և արձանագրությունների ձևերը.

8) սահմանում է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինելու վերաբերյալ զեկույցը կազմելու և տրամադրելու կարգը.

9) հաստատում է կամավորի հետ կնքվող պայմանագրի օրինակելի ձևը և պայմանները.

10) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

(54-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-283-Ն, 23.05.18 ՀՕ-335-Ն, 15.06.22 ՀՕ-247-Ն)

Հոդված 55. Պրոբացիայի ծառայության ղեկավարը և տեղակալները

(վերնագիրը խմբ. 21.01.20 ՀՕ-74-Ն)

1. Պրոբացիայի ծառայության անմիջական ղեկավարումն իրականացնում է պրոբացիայի ծառայության պետը:

1.1. Պրոբացիայի ծառայության ղեկավար կարող է նշանակվել այն անձը, որն ունի բարձրագույն կրթություն և հանրային ծառայության առնվազն չորս տարվա ստաժ կամ ունի բարձրագույն կրթություն և չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ:

1.2. Պրոբացիայի ծառայության ղեկավարի տեղակալ կարող է նշանակվել այն անձը, որն ունի բարձրագույն կրթություն և հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ ունի բարձրագույն կրթություն և երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ:

2. Պրոբացիայի ծառայության ղեկավարը՝

1) ապահովում է պրոբացիայի ծառայության բնականոն գործունեությունը.

2) ապահովում է «Պրոբացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, սույն օրենքի, Հայաստանի Հանրապետության այլ օրենքների ու իրավական ակտերի պահանջների, ինչպես նաև համապատասխան նախարարի հրամանների և ցուցումների կատարումը.

3) իր իրավասության շրջանակում ընդունում է հրամաններ, որոշումներ, տալիս է ցուցումներ.

4) իրեն վերապահված լիազորությունների սահմաններում առանց լիազորագրի հանդես է գալիս պրոբացիայի ծառայության անունից, ներկայացնում նրա շահերը, տալիս է լիազորագրեր պրոբացիայի ծառայության անունից հանդես գալու համար.

5) օրենքով, այլ իրավական ակտերով և հիմնադրի սահմանած կարգով տնօրինում է պրոբացիայի ծառայությանն ամրացված գույքը.

6) պրոբացիայի ծառայության անունից ներկայացնում է հաշվետվություններ.

7) ներկայացնում է պրոբացիայի ծառայությունն այլ մարմինների, կազմակերպությունների և քաղաքացիների հետ հարաբերություններում.

8) իր իրավասության շրջանակում քննում է պրոբացիայի ծառայողների որոշումների, գործողությունների կամ անգործության դեմ բերված բողոքները, օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված իր լիազորությունների սահմաններում կասեցնում, վերացնում, անվավեր, չեղյալ կամ ուժը կորցրած է ճանաչում պրոբացիայի ծառայության պաշտոնատար անձանց՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող, այլոց իրավունքները խախտող կամ սահմանափակող հրամանները, որոշումներն ու ցուցումները.

9) միջնորդություն է ներկայացնում պրոբացիայի ծառայությունում քաղաքացիական ծառայողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող անձին խրախուսանքի կամ կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ.

10) առաջարկություններ է ներկայացնում համապատասխան նախարարին՝ պրոբացիայի ծառայությանն առնչվող օրենսդրության կատարելագործման վերաբերյալ.

11) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

3. Պրոբացիայի ծառայության ղեկավարը պատասխանատվություն է կրում պրոբացիայի ծառայության խնդիրների իրականացման համար:

(55-րդ հոդվածը փոփ., խմբ. 23.03.18 ՀՕ-283-Ն, խմբ., լրաց. 21.01.20 ՀՕ-74-Ն)

Հոդված 56. Պրոբացիայի ծառայության տարածքային մարմնի ղեկավարը

1. Պրոբացիայի ծառայության տարածքային մարմնի (այսուհետ՝ տարածքային մարմին) ղեկավարումն իրականացնում է տարածքային մարմնի ղեկավարը: Տարածքային մարմնի ղեկավարը՝

1) ապահովում է տարածքային մարմնի բնականոն գործունեությունը.

2) իր իրավասության շրջանակում ապահովում է սույն օրենքի, Հայաստանի Հանրապետության այլ օրենքների ու իրավական ակտերի պահանջների, ինչպես նաև համապատասխան նախարարի հրամանների և ցուցումների կատարումը.

3) իր իրավասության շրջանակում ընդունում է որոշումներ, տալիս է ցուցումներ.

4) իր իրավասության շրջանակում քննում է պրոբացիայի ծառայողների նկատմամբ բերված բողոքները, օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված իր լիազորությունների սահմաններում կասեցնում, վերացնում, անվավեր, չեղյալ կամ ուժը կորցրած է ճանաչում պրոբացիայի ծառայողի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող, այլոց իրավունքները խախտող կամ սահմանափակող որոշումներն ու ցուցումները.

~~5) իրեն վերապահված լիազորությունների սահմաններում առանց լիազորագրի հանդես է գալիս տարածքային մարմնի անունից, ներկայացնում նրա շահերը.~~

~~6) տարածքային մարմնի առանձին գործառույթներն իրականացնելու համար տալիս է լիազորագրեր.~~

~~7) միջնորդություն է ներկայացնում պրոբացիայի ծառայության ղեկավարին՝ տարածքային մարմնի ծառայողներին խրախուսանքի կամ կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ.~~

~~8) առաջարկություններ է ներկայացնում պրոբացիայի ծառայության ղեկավարին՝ պրոբացիայի ծառայությանն առնչվող օրենսդրության կատարելագործման վերաբերյալ.~~

~~9) տարածքային մարմնի անունից ներկայացնում է հաշվետվություններ.~~

~~10) ներկայացնում է տարածքային մարմինն այլ մարմինների, կազմակերպությունների և քաղաքացիների հետ հարաբերություններում.~~

~~11) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:~~

~~*(56-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-283-Ն)*~~